

մանկավարժական որոշակի ձիրք ու հակումներ³⁸, անկասկած կարող էր իր հիմնադրած Ոսխտի անդամներին փոխանցել իր ողջ իմացածը, իբրեւ ելակէտ նորաստեղծ եղբայրութեան երաժշտական աւանդոյթների դոյացման ու զարգացման:

Որ դա ճիշտ այդպէս էլ եղել է՝ կարող ենք դատել Սեբաստացու գործադրած ջանքերի արդիւնքից եւս: Ծագել, զարգացել ու յարատեւում է հայ հոգեւոր եկեղեցական պաշտօնեւորութեան վենետիկեան դպրոցը: Անշուշտ, անցած երեք հարիւր տարիների ընթացքում, օտարութեան մէջ, մանաւանդ այն շրջանում, երբ բաղմազան երգերը սերնդից սերունդ փոխանցւում էին գլխաւորապէս բանաւոր աւանդութեամբ, հնամենի ոճից հեռանալու առանձին դէպքեր կարող էին եւ տեղ գտած լինել: Դրանց վրայ ուշադրութիւն է հրաւիրել տալիս Ե. Տնտեսեանը³⁹: Քայց դրանք ամենեւին չեն խանդարում, որ յիշեալ դպրոցը, ամբողջապէս առած, մեզ համար ընդունելի լինի որպէս հայ հոգեւոր երգարուեստի՝ ուշ միջնադարում ձեւաւորուած խոշոր ճիւղերից մէկը, ինչպէս ասել ենք ուրիշ անգամ էլ⁴⁰, ու հիմա եւս հաստատում ենք:

Երեւան

ՆԻԿՈՂՈՍ ԹԱՀՄԻՋԵԱՆ

ՄԻԻԹԱՐ ԱՐԲԱՅՈՐ «ԱՆՃԱՌԻՆ ԽՈՐԱՆ» ՏԱՂԸ

Միիթար Արբաչայր փր բաղմարդիւն գործունէութեան կողքին, հայ երաժշտական մշակոյթի պատմութեան մէջ իր արժանաւոր տեղը ունի նաեւ որպէս երաժիշտ: Արդարեւ, ան՝ երգաստեղծի իր քանքարը դրսեւորած է նաեւ հոգեւոր տաղերով, որոնցմէ քանի մը հատը անցած են տպագիր հին տաղարաններու մէջ:

Այդ տաղերէն փունջ մը՝ որոնց եղանակները աւանդաբար հասած են մինչեւ մեր օրերը, Հ. Ղեւոնդ Վրդ. Տայեան ձայնագրելով եւ զանոնք ներդաշնակել տալով Նափոյի Պետական երաժշտանոցի երաժշտապետ Անթոնիոյ Զէչէի, 1954 թուականին, առանձին գրքոյ՝ կով մը լոյս կ'ընծայէր Վենետիկի Միիթարեան տպարանէն: Այդ ժողովածուին մէջ տեղ գրաւած է նաեւ «Անճառիմ խորան» բառերով սկզբնաւորող տաղը («Երդ առ Երանուհի Կոյսն՝ յօրինեալ բանիւք դրուատականօք եւ պէսպէս խնդրուածովք»), որուն խօսքերուն իմաստէն դատելով՝ Միիթար դրած է իր կուրուքեան օրերուն:

1930ական թուականներուն, Գահիրէի մէջ, «Անճառիմ խորան» տաղը ձայնագրած է նաեւ հմուտ ձայնագրագետ Մերկեր Մելիք, լսելով Մուրադ-Ռաֆայէլեան վարժարանի նախկին սան՝ եգիպտահայ իրաւաբան եւ անուանի դաստիարակ Գարեգին Տիւրկէրեանէ, որ եղած է բանաստեղծ Դ. Վարուժանի դասընկերը՝ նոյն կրթական հաստատութեան մէջ: Այդ տարբերակը՝ հիմնականին մէջ՝ շատ մօտ է Հ. Ղ. Տայեանի ձայնագրած եղանակին: Այդ տաղը երգեհոնի նուագակցութեամբ դաշնաւորեցինք մենք ալ, առաւելաբար նկատի ունենալով Հ. Տայեանի ձայնագրածը, եւ կը ներկայացնենք այստեղ:

Մեր անձնական երաժշտական դիւանին մէջ կը գտնուին Միիթար Արբաչօր նոյն «Անճառիմ խորան» տաղին խօսքերուն վրայ գրուած այլադան եղանակներ՝ յօրինուած տարբեր հայ հեղինակներից, որոնց մէջ՝ անկասկած, առանձին հետաքրքրութիւն կը ներկայացնէ հայ նոր ձայնագրութեան դիւտարար Համբարձում Լիմոնճեանի հե-

38. Հմմտ. Ղ. ՏԱՅԵԱՆ, Միիթար Արբաչայր երաժիշտ, Կ. հրտ. էջ 29:

39. Ե. ՏՆՏԵՍԵԱՆ, Նկարագիր երգոց Հայաստանեայց Եկեղեցւոյ, Կ. Գոլիս 1874:

40. Ներսէս Շնորհալիմ երգահան եւ երաժիշտ, էջ 91:

ղինակածը, որուն երաժշտական լեզուն՝ կազմավորուած շարականի մեղեդիական տարադներուն վրայ, զերծ չէ քաղաքային երգային տարրերէ:

Ինչպէս յայտնի է, Համբարձում Լիմոնճեան անցեալի հայ հոգեւոր երաժշտական դանձերը ստույգ կորուստէ վերկելու իր շնորհաշատ աշխատանքներուն առնթեր, ձեռնամուխ եղած է տաղարանը ձոխացնելու ինքնուրոյն երկերով: Անոր տաղային ստեղծագործութիւններուն մէջ կ'առանձնանան Աստուածածնի նուիրուած տաղերը՝ որոնցմէ մէկն է «Ամնառին խորան»ը, Մխիթար Արքաճօր խօսքերով: Այդ տաղը՝ հեղինակին բնաղբէն, հայկական նոր «բարեփոխեալ» ձայնադրութեամբ ընդօրինակած է Մերկեր Մելիք: Հետաքրքրական է նշել, որ Լիմոնճեան, իր ձայնադրումի աշխատանքներուն համար անհրաժեշտ տեսած է հնարելու եւ օգտագործելու՝ ձայնը քառորդ աստիճան բարձրացնող «չուրի» կոչուած օժանդակ «նշանագիր»ը (իր արտաքին ձեւով «չուրի»ն յար եւ նման է «կիւլեր»ին, սակայն կը դրուի ձայնանիշերուն ներքեւ): Այդ տաղին եւրոպական ձայնադրութեան վերծանումը կատարած ենք Մ. Մելիքի ձայնադրածէն, պայմանականօրէն հայկական ձայնադրութեան «սիւն» ձայնանիշը համաձայնեցնելով եւրոպական «տօ»ին: Ընթերցումի համար պէտք է նկատի ունենալ՝ որ հայկական բնական հնչիւնաշարը հաւասարաչափուած չէ: Նմանապէս «ցած» կոչուած հնչիւնները պայմանականօրէն նշանակած ենք շեղ գծիկներով: Պայմանական են նաեւ տրոհակային գիծերը, որոնք դրուած են ընթերցումը դիւրացնելու նպատակով:

Գահիրէ

ԵՂՈՒԱՐԴ ՅԱԿՈԲՅԱՆ

ՕՐՕՐ

ՄԽԻԹԱՐ ՍԵՖԱՍՏԱՅԻ

Ներդաշնակումը Ն. ԹԱՀՄԻՋԵԱՆԻ

Moderato

Sopr.

Solo

Նրն - ջեա, որ -

դեակ, քաղցր եւ ա - նոյշ. Հան-գիր քը - նով եւ առ քեզ

նյժ: նյժ:

Coda

u.

[illegible][illegible]

ስጦት ስጦት ሰጠው ስጦት ስጦት ስጦት ስጦት
 - ኔ ስጦት - ኔ - - - - ስጦት -

[illegible]

$\frac{2}{w} \sim \frac{1}{w} \parallel \quad \frac{2}{w} \sim \frac{1}{w} \parallel \quad \frac{2}{w} \sim \frac{1}{w} \parallel \quad \frac{2}{w} \sim \frac{1}{w} \parallel \quad \frac{2}{w} \sim \frac{1}{w} \parallel \quad \frac{2}{w} \sim \frac{1}{w} \parallel \quad \frac{2}{w} \sim \frac{1}{w} \parallel$
 $- \quad \frac{1}{w} \quad - \quad \frac{1}{w} \quad - \quad \frac{1}{w} \quad - \quad \frac{1}{w} \quad - \quad \frac{1}{w} \quad - \quad \frac{1}{w} \quad -$

١٠٠٠
 ١٠٠
 ١٠
 ١

[illegible]

(Handwritten signature)

F.



Միտիքար Աբրահոբ «Անճառին խորան» տաղը, Պապա Համբարձում Լիմնճեանի
հայկական ձայնագրութեմն հերոպակամի վերածուած, աշխատասիրութեամբ
եղուարդ Յակոբեանի:

ԱՆՃԱՌԻՆ ԽՈՐԱՆ

ԵՐԳ ԱՌ ԵՐԱՆՈՒՀԻ ԿՈՑՍՆ

Խօսք եւ եղանակ՝ ՄԻԽԻԹԱՐ ԱՐԲԱՆՆՈՐ
Դաշնաւորում՝ ԵՒՈՒԱՐԻ ՅԱԿՈԲԵԱՆԻ

CANTO *Andante Sostenuto*

ORGANO *Andante Sostenuto* *mf*

1. Ան - մա - ռին
2. Ես իսկ չեմ
3. Թա - գու - հի

a tempo

խո - րան, Բա - մին Բնա - կա -
ար - ժան Զքեզ առ - նուլ քե -
վե - թին, Ժա - ռանգ Երկ - նա -

mf

րան. Գով - եալ Մա - թի - ալ
րան. Է քեզ Ե - րա - մի
յին. Ի քեզ սա - դա - տիմ

p poco rit. a tempo

Սրբ - քու - հի, Դու վարդ առ -
Տի - րա - ծին, Ըն - տիր Մա -
Տա - լի - քայ, Լոյս սուր իմ

a tempo

p poco rit. rit. p

քա - ռամ,
 րի - ամ,
 ա - կին,
 Դու վարդ
 ըն - տիր
 Լոյս տուր

1. 2. *a tempo* *p poco rit.*
 ան - քա - ռամ:
 Մա - րի - ամ:
 3. *rit.* *p*
 իմ ա - կին:
 Fine

1. 2. *a tempo* *p poco rit.*
 3. *rit.* *p*
 4. *molto rall.*
 Fine

Աննառին խորան,
 Բանին բնակարան.
 Գովեալ Մարիամ սրբուհի,
 Դու վարդ անքառամ (կրկ.):

Ես իսկ չեմ արժան
 Ձեզ առնուլ բերան.
 Էքեզ երանի, տիրածին,
 Ընտիր Մարիամ (կրկ.):

Թագուհի վերին,
 Ժառանգ երկնային,
 Ի քեզ պաղատիմ, Տալիքայ,
 Լոյս տուր իմ ալին (կրկ.):



Լորն իմ լինի ք օրինգ տնօրինաբար,
 Կոչի ջն, և փրկէ զիս իշխանաբար:



Երանիք ոմանք՝ աստղեալէ՝ ի նոյնոյ
 Գիւնարայ վարդապետէ:



Կանոն հրաշափառ տօնախմբու
 Թե անունն յնի:

() Երանիք. Գ. Կ:

Որ երգէ որդէս () Երանիք զքեզ ան
 սէղբն հայր:



Լուսնայր հօր ճանաչ
 Գայթ, որ վասն մե՛ր
 մարմնացաւ, առ ի
 փրկէ՛ւր ըզքերեալ
 ի գերդէնց բանասերկուն. փրկ-
 ւեա՛ւ և՛ զմեզ տէր փառաց ա-
 նունմը փրկէ՛ւր յիսկունսի:

Տաղարանին տպակից, Շարականներ, յօրինուած
 Միսիքար Աբբաօր կողմէ (Գիրք Գրիստո-
 նէականի վարդապետութեան, տպ. Վենետիկ
 1771ին, երրորդ տպագրութիւն, էջ 170-171):

Այսօր հանդիսանալիս ձայն ա-
ւետման հրեշտակին, թէ՛ այսօր
ձեզ ծնաւ փրկիչ որ է՝ օծեալ
միածին. փրկեալ է զմեզ տէր
փառաց որդի՝ սո՛ւրբ անունմբ
քոյնն:

Արդ ցընծանալ բերկրեացուք
առ քեզ հոգի նբ անմահ. զի այ
սօր հակից քո բան՝ կոչի յիսուս
և փրկիչ. փրկեալ է զմեզ
տէր փառաց անունմբ փրկիչն
յիսուսի:

Այլ սո՛ւրբ արմատ փրկիչութեան
խսկո՛ւհի կոյս՝ մարմամ, ՚ի քեզ
ևս այսօր եղև բան, որ է՝ վեր
քան զամենայն, կոչիլ քեզ ծը-
նող փրկիչութեան անունմբ յի-
սուսադրո՛ւթեալն:

Ար ՚ի նախնունմն ընտրեցեր զյե-
սուս փրկիչ յակոբայ. իսկ այսօր
զորդիդ միածին ջնորհես փրկիչ
աշխարհի. օրհնե՛մք ըզհայրըդ

Գը՛թած անունմբ որդւոյ քոյ
յիսուս:

Ի՛րկըրպագե՛ք անուն յիսուս
յիսուս տէր փրկիչ. որոյդ քնկ
յանէտ կըրկնի ծո՛ւնը յայնց ո՛րք
յերկինս և յերկրի. կըրկնե՛մք
և մեք ծո՛ւնը հոգւով անունն քոյ
և քեզ յանէտ:

Արդ աղաչեմք նբ զհոգիդ, որ
Գը՛թութեանց ես աղբււր. զի
՚ի սիրտ մեր և ՚ի հոգի դիցես
զանունն յիսուսի. որով մե՛ք
յանէտ կարիցեմք ասել նոր զյի-
սուս փրկիչ:

Արա՛ն լէր սուրբ մարմամ մայր
և ծընող յիսուսի. զի թէպէտ
այսօր ճըմլեցաւ սիրտ քո Գը-
թած և բարի. սակայն յո՛յժ
հը՛րձո՛ւեալ ցընծայար կոչմամբ
որդւոյն քո յիսուս:

Տաղարանին տպակից, Շարականներ, յօրինուած
Մխիթար Աբբաօր կողմէ (Գիրք Քրիստո-
նէականի վարդապետութեան, տպ. վեցետիկ
1771ին, երրորդ տպագրութիւն, էջ 170-171):

ՀԱՐՅԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵՐԱՍՏԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԵՆԵՆ

Փոքր Ասիոյ կեդրոնական քաղաքներէն մէկն է Սեբաստիա, ուր
ասկէ 300 տարի առաջ ծնաւ Մեծն Մխիթար եւ կոչուեցաւ Սեբաս-
տացի:

Այս քաղաքին մասին գրելով Մատթէոս Ուռհայեցի մեր պատ-
միչը, զայն կը կոչէ «բաղմամբոյս եւ նշանաւոր քաղաք»¹:

Այս նշանաւոր քաղաքին կ'աւանդուեն մեր հին պատմագիրներէն
Հատեր ալ. այսպէս՝ Թովմա Արծրունի, Սմբատ Սպարապետ, Արիս-
տակէս Լաստիվերտցի, Սամուէլ Անեցի, Ասողիկ եւ Վարդան, եւ
հուսկ՝ Յովհաննէս Սեբաստացին, որ եկեղեցական Առաջնորդն է ե-
ղած քաղաքին, 1809-1829 տարիներուն:

Սեբաստիոյ մասին գրած են նաեւ, 1800ական թուականներուն,
հայ եւ օտար ուղեգիրներ. անոր պատմական փառապանծ անցեալի
մասին լոյս տեսած են զանազան հատորներ, որոնցմէ վերջինը՝
1974ին, «Պատմագիրք-Յուշամատենան Սեբաստիոյ եւ գաւառի հայու-
թեան» խորագրով, որու հեղինակն է Առաքել Ն. Պատրիկ:

Ներկայ յօդուածով, բնականաբար, մենք չենք ուղեր կրկնել զա-
նոնք, եւ ոչ ալ Սեբաստիոյ ընդարձակ պատմութիւնը շարադրել.
այլ նպատակ ունինք լուսարանել պատմական կարեւորութիւն ունե-
ցող քանի մը մուծ ու տարակուսելի կէտեր, որոնք հետեւեալներն են.

1. Հայաստանէն դուրս գտնուող հեռաւոր քաղաք մը՝ Սեբաս-
տիա, ի՞նչպէս բաղմամբորդ ու հայաբնակ դարձեր է, դարերու ըն-
թացքին:

2. Սենեքերիմ Արծրունի Վասպուրականի թաղաւորը, 1021ին,
ինչո՞ւ նախընտրեց երթալ Սեբաստիա, եւ ոչ թէ ուրիշ քաղաք մը,
եւ ի՞նչ հանգամանքով:

1. ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, Պատմութիւն, Երուսաղէմ 1869, էջ 159: